

ԶԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՐՊԱՐՏԱՆՔԻ ԴԵՄ

ՆԱՄԱԿ Ա

Վերջերս «Ազատամարտ» պարբերականի «Վարուժան» գրական-մշակութային հավելվածում տպագրվել է «Պարույր Սևակը անուններ է տալիս...» խորագիրը կրող մի հոդված, որի հեղինակ Սեյրան Գրիգորյանը (մեզ անծանոթ անուն) ջանում է վարկաբեկել մեր մտավորականության շատ ներկայացուցիչների: 1960-ական թթ. գործող մի շարք հայտնի գրողներին ու դրականագետներին վատաբանելուց հետո նա փորձում է վարկաբեկել նաև նշանավոր պատմաբան Մկրտիչ Ներսիսյանին: Գրողների մասին, կարծում ենք, կարտահայտվեն նրանց գործընկերները, իսկ մենք, մի խումբ հասարակագետներ, որ տասնյակ տարիներ աշխատել ենք Ներսիսյանի հետ, շենք կարող մեր խոսքը չասել նրա դեմ ուղղված զուպարտանքի մասին:

Ոչ միայն մեզ, այլև մեր գիտական հասարակայնության լայն շրջաններին հայտնի է, որ պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, 1950 թվականից Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ներսիսյանը մեր մտավորականության անվանի ներկայացուցիչներից է: Նա տասնյակ արժեքավոր գրքերի ու հարյուրավոր գիտական հոդվածների հեղինակ է, երկար տարիներ դասավանդել է հանրապետության ուսումնական բարձրագույն հաստատություններում, վարել է ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրենի, ակադեմիայի փոխպրեզիդենտի, Երևանի պետական համալսարանի ռեկտորի և այլ պատասխանատու պաշտոններ, 1958 թ. սկսած մինչև օրս խմբագրում է միջազգային ճանաչում ունեցող «Պատմաբանասիրական հանդեսը», գործուն մասնակցություն է ունենում մեր երկրի գիտական-մշակութային ու հասարակական կյանքին:

Դեռևս 1940—1950-ական թվականներին, երբ Հայաստանում և ամբողջ հորհրդային Միության մեջ իշխում էր վուլգար սոցիոլոգիական դոգմատիզմը և փաստորեն աղքելված էր հայրենասիրական թեմաների մշակումը, Ներսիսյանը խիզախություն ունեցավ 1946 թ. պաշտպանել դոկտորական դիսերտացիա «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ» թեմայով (լույս տեսավ միայն Ստալինի մահից հետո, 1955 թ.): Այդ աշխատության հեղինակն առաջին անգամ խորհրդահայ պատմագրության մեջ ճշմարիտ գնահատական տվեց Ռ. Պատկանյանին, Բաֆոնին, Գ. Արծրունուն, հրիմյան Հայրիկին և հայ ազատագրական գաղափարախոսության մի քանի այլ ներկայացուցիչներին: Հակառակ այն ժամանակ իշխող մտայնության, նա ցույց տվեց, որ արևմտահայ ազատագրական շարժումը ժողովրդական զանգվածների ինքնաբուխ, արդար, ինքնապաշտպանական ազատագրական պայքար էր: Դեռևս 1955 թ. նա հանդգնեց հոդված գրել Մեծ հեղեղի մասին, որը տպագրվեց Ակադեմիայի գիտական «Տեղեկագրում», իսկ 1966 թ. Ներսիսյանի ջանքերով ու խմբագրության հրապարակվեց «Հայ ժողովրդի գեղեցիկ Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ծանրակշիռ ժողովածուն ռուսերեն լեզվով (հետագայում նաև հայերեն): Նկատենք, որ հորհրդային Հայաստանում Ներսիսյանը դարձյալ առաջինն էր, որ գրեց մեծ հայդուկի, զորավար Անդրանիկի մասին, ըստ պատշաճին լուսաբանեց նրա տեղն ու դերը հայ ազատագրական շարժման

մեջ (տե՛ս «Սովետական Հայաստան», 1965 թ. փետրվարի 25): Մասնագիտական շրջաններին լավ հայտնի են հայ-սովետական հարաբերությունների պատմությունը, դեկաբրիստներին, ռուս և հայ նարոդնիկներին նվիրված նրա աշխատությունները:

Ժամանակին ներսիսյանը մեղադրվել է «նացիոնալիստական, վնասակար» գործունեության մեջ, համարվել է Ա. Խանջյանի «դրածոն», բուրժուական գաղափարների քարոզիչ և այլն, որի հետևանքով երկու անգամ հեռացվել է կուսակցությունից ու աշխատանքից: Բայց Գրիգորյանը, անտեսելով փաստերը, հենվում է ինքնառեկլամով զբաղվողների և անձնական հաշիվներ մաքրող «հուշագիրներ» վ. Սաֆարյանի ու Ա. Արիստակեսյանի վրա, թեև վերջիններիս դեմ 1988 թ. հանդես եկան Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական աշխատակիցներ Ս. Արևշատյանը, Հ. Փափազյանը, Վ. Գրիգորյանը ու Բ. Զուգասզյանը, այնուհետև ՊԲՀ խմբագրությունը անդամներ Բ. Առաքելյանը, Ս. Երեմյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Նալբանդյանը, Վ. Համազասպյանը, Ա. Ոսկանյանը և է. Պիվազյանը (տե՛ս ՊԲՀ, 1989 թ., № 3, էջ 230—234): Սակայն Գրիգորյանը հավատ է ընծայում ոչ թե վերը նշված գիտնականներին, այլ ակադեմիկոսներ Լ. Խաչիկյանից ու Մ. Ներսիսյանից զանազան պատճառներով դժգոհ «հուշագիրներին»: Գրիգորյանը, իհարկե, կառարկի, թե ինքը հենվել է նաև Սևակի վրա, բայց գործի մեջ խորանալու և բարեխիղճ մոտեցում ունենալու դեպքում չէր կարելի չնկատել, որ բանաստեղծի խիստ անձնական բնույթի նամակում գրված մի քանի տողերը ներսիսյանի մասին պարզապես ցավալի թյուրիմացության արդյունք են, որի մասին ասված է դեռևս 1989-ին: Անկողմնակալության դեպքում դժվար չէր կռահել, որ Հանդեսի խմբագրի դեմ Պարույր Սևակին գրգռել են հենց այդ շարախոս «հուշագիրները»: Չենք կասկածում, որ բանաստեղծը թույլ չէր տա լույս ընծայել հրապարակման համար շնախատեսված իր նամակի նշված տողերը, ինչպես, օրինակ, այդ չի արել անգամ Ա. Արիստակեսյանը Պարույր Սևակին նվիրված իր գրքում, թեև նա բոլորովին այլ պատճառով դժգոհ էր Հանդեսի խմբագրից:

Գրիգորյանը մինչ գրիչ վերցնելը պարտավոր էր ծանոթանալ Հանդեսի խմբագրությունում և Հայաստանի պետական արխիվում պահվող համապատասխան նյութերին, նյութեր, որոնք քննարկվող հաջորդական միանգամայն պարզ ու սպառիչ պատասխան: Վերջապես, նա կարող էր հանդիպել ՊԲՀ-ի խմբագրության անդամների հետ և պարզաբանել խնդիրը: Բայց, դժբախտաբար, գերադասվել է չափախառնության և աղմկաբերության միջոցով անուն հանելու փառասիրական թեմը: Խիստ բնորոշ է, որ Գրիգորյանի զրպարտչական ելույթից շատ չանցած Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի միաձայն որոշմամբ «Գիտություն» և բարձրագույն կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար՝ Մ. Ներսիսյանը պարգևատրվեց հատուկ մեդալով:

Իսկ ի՞նչ է մտածել «Վարուժան»-ի խմբագիրը, երբ առանց ստուգելու փաստերը տպագրել է բացահայտ ստախոսություն: Դա ո՞ւմ է հարկավոր: Մի՞թե դժվար է հասկանալ, որ Գրիգորյանի հրապարակումն արդի ծառայություն է, որի կարիքը հրեք չի ունեցել մեծ բանաստեղծը: Ե՞րբ պետք է վերջ դրվի մեր մտավորականներին շարախոսելու և վարկաբեկելու ամոթալի մոլությունը, որն այսօր մեզանում, դժբախտաբար, մեծ ծավալ է ստանում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսներ ԱՌԱՔԵՆՅԱՆ Բ., ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ Վ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ., ԶԱՀՈՒԿՅԱՆ Գ., ԶՐԲԱՇՅԱՆ ԷԳ., ՍԱՐԳՍՅԱՆ Գ., նույն ակադեմիայի քաջակից անդամներ ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ., ՀԱՆՎԵՐԴՅԱՆ Լ., ՍԱՐԻՆՅԱՆ Ս., պատմական գիտությունների դոկտորներ ԳԵՂԱՄՅԱՆ Գ., ՄՈՒՐԱԴՅԱՆ Պ., ՊՈՂՈՍՅԱՆ Հ., ՍԱՀԱԿՅԱՆ Ռ., ՍԱՐԳՍՅԱՆ Ե.:

ՆԱՍՏԱԿ Բ

Պատմության կեղծարար Զիա Բունիաթովի «Азербайджан в VII—IX вв.». գրքի վերաբերյալ «Պատմա-բանասիրական հանդեսի» 1967 թ. առաջին համարում տպագրված ուսման գրախոսականի կապակցությամբ «Հանդեսի» խմբագրության արխիվում պահպանված փաստաթղթերի, ինչպես նաև այդ գրախոսության տպագրության հետ կապված եղելությունների մասին ունեցած իմ հիշողությունների հիման վրա, ես, որ այդ ժամանակ «Հանդեսի» խմբագրական գլխավորի անդամ էի և պատասխանատու քարտուղարը, կարող եմ պատահորեն հաստատել հետևյալը:

1. Այդ գրախոսության հայերեն օՍ էջանոց տեքստը գրել և 1966 թ. նոյեմբերի 4-ով թվագրված կից նամակով «Հանդեսի» խմբագրությանն էր ներկայացրել Աղվանքի գրականության ու պատմությանը քաջատաղյալ հայ գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, հանգուցյալ պրոֆեսոր Ասատուր Մնացականյանը: Ընդունված կարգի համաձայն, այդ տաքսաին ծանոթացել և իրենց գրավոր դրական կարծիքներն էին տվել խմբագրական կոլեգիայի այն բոլոր անդամները, որոնք այդ ժամանակ դասվում էին Սրեանում: Ընդհանուր կարծիքն այն էր, որ ներկայացված գրախոսությունը, թեպետ և բավական ձգձգված, բայց գիտական տեսակետից միասնապաշտ ընդունելի տեքստ է, սակայն շուտի անհրաժեշտ հրապարակախոսական ոգի: Իր գրախոսականում հանգուցյալ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, օրինակ, գրում էր, որ ընկ. Ասատուր Մնացականյանի փայլուն հոդվածը ցանկալի է, որ ունենա սուր պամֆլետի լեզու:

2. Ձևովի տակ ունենալով խմբագրական կոլեգիայի անդամների մեծամասնության գրավոր կարծիքները, խմբագրական կոլեգիան որոշեց գրախոսության վերահիշյալ ըացը վերացնելու նպատակով համագործակցության հրավերել Պարույր Սևակին, որի սուր գրիչն ու հրապարակախոսական տաղանդը հայտնի էին բոլորին:

Օտանոթանալով Ասատուր Մնացականյանի ներկայացրած տեքստին և ընդունելով խմբագրական կոլեգիայի առաջարկությունը, Սևակը զգալի աշխատանք կատարեց գրախոսությունը լրամշակելու համար: Գրախոսությունը խմբագրության հանձնարարությամբ ուսման է թարգմանել բանաստեղծի կինը՝ Նելլի Մենաղարիշվիլին: Ասատուր Մնացականյանի համաձայնությամբ իրավացիորեն որոշվեց, որ Սևակը ևս ստորագրի գրախոսությունը՝ որպես համահեղինակ:

3. Մինչև 1967 թ. հունվարի կեսերը արդեն ուսման է թարգմանված գրախոսությունը (45 մեքենագիր էջ) խմբագրվեց ու ոճաբանվեց, իսկ հետո էլ մի վերջին անգամ վերանայվեց հունվարի 16-ի—լույս 17-ի գիշերը՝ կոլեգիայի որոշմամբ ստեղծված աշխատանքային հատուկ խմբի կողմից: Պահպանված մեքենագիր օրինակի վրա (որը ունի բազմաթիվ մանր ու խոշոր կրճատումներ ու ճշգրտումներ) իմ ձեռքով գրված է. «Այս վարիանտը ստեղծվել է 1967 թ. հունվարի 16-ի—լույս 17-ի գիշերը՝ համատեղ ջանքերով (Սևականյան, Ղանալանյան, Մնացականյան, Սևակ, Պիվազյան և Արիստակեսյան, մասամբ նաև Վ. Նալբանդյան)»: 1967 թ. հունվարի 24-ին այդ տեքստը (36 էջ), ու ստորագրված է երկու հեղինակների՝ Ասատուր Մնացականյանի և Պարույր Սևակի կողմից, ուղարկվել է ապագային: Սակայն խմբագրության մի քանի այլ անդամների պահանջով գրախոսության այս տեքստն արդեն շարված վիճակում, վերանայվեց ու լրացվեց: Սրանք են փաստերը, որոնց իսկությունը ամենայն կասկածից վեր է:

4. Ինձ հայտնի չէ որևէ դեպք, որ գրախոսության հեղինակները (որոնց հետ ես հաճախ էի հանդիպում), բողոքած լինեն հրապարակված գրախոսությունը «աղավաղելու» կամ «բեկտելու» մասին: Այդ առասպելը տարիներ անց հորինել են ստախոս մարդիկ, ձգտելով այլևայլ անազնիվ միտումներով շարախոսել «Հանդեսին» և նրա գլխավոր խմբագրին: Վերջերս դրանց է միացել ոմն Սեյրան Գրիգորյան, որը «Ազատամարտ» թերթի «Վարուժան» գրա-

կան-մշակութային հավելվածում (մայիս-հունիս, 1994 թ.) տպագրված «Պարույր Սևակը անուններ է տալիս...» հոդվածի վերջին մասում ջանում է նսեմացնել «Հանդեսի» և նրա հիմնադիր ու անփոփոխ խմբագիր ակադեմիկոս Մ. Ներսիսյանի՝ 1967 թ. սկզբներին կատարած շատ կարևոր գործի նշանակությունը: Չմոռանանք, որ պատմության կեղծարար Զիա Բունիաթովի գրքի մասին միակ ու ջախջախիչ գրախոսությունը այն ժամանակ տպագրվեց միայն «Հանդեսում»: Ուրանալ «Հանդեսի» և նրա գլխավոր խմբագրի շնորհակալ, ողջունելի նախաձեռնությունը այդ հարցում, կարող է միայն շարամիտ գրչակը: Ավելորդ չի այստեղ նշել, որ «Հանդեսի» խմբագրության գրական աշխատակից Ալբերտ Արիստակեսյանը, որ Սևակի ոչ միայն գրական վաստակի ուսումնասիրողն ու կենսագիրն էր, այլև նրա մտերիմ ազգակալն էր, բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված իր գրքում (լույս է տեսել Սևակի ողբերգական մահվանից տարին երեք տարի անց) ոչ մի ակնառի չի առել այն մասին, որ գրախոսության հեղինակը եղել է ոչ թե Ա. Մնացականյանը, այլ Պ. Սևակը, կամ թե իբր բանաստեղծը երբևէ դժգոհություն է արտահայտել Զիա Բունիաթովի գրքի վերաբերյալ Ասատուր Մնացականյանի և իր գրախոսությունը «բզկտելու» կամ «ասվադելու» մասին:

5. ՊԲՀ-ի և նրա խմբագրի դեմ ուղղված մեղադրանքները միանգամայն անհիմն են: Այդ մասին են խոսում ոչ միայն փաստերը, այլև հասարակ տրամաբանությունը: Միթե մեծանուն բանաստեղծը թույլ կտար, որ իր հետ վարվեին այդքան անարդարացի և այդ այն ժամանակ, երբ լինելով Գրողների միության երկրորդ քարտուղար, նա ուներ բոլոր հնարավորությունները հրապարակելու իր գրավոր ու բանավոր ելույթները ինչպես գրողների պարբերականներում, այնպես էլ այլ հանդեսներում: Ակնհայտ է, որ քննարկվող հարցում զգալի դեր են խաղացել երկու հանգամանք: Առաջին, Սևակին գրգռել և թյուրիմացության մեջ են գցել «Հանդեսից» դժգոհ ստախոս մարդիկ: Երկրորդ, հրապարակման համար չնախատեսված իր խիստ անձնական նամակում նա հարկ եղած մտահոգություն չի ցուցաբերել փաստերի ճշգրտության նկատմամբ: Եվ վերջապես մի հարց. մի՞թե հնարավոր չէր, որ Պ. Սևակը ևս սխալվեր թեկուզ մի մանր, մասնակի հարցում: Չէ որ ճիշտ է ասված, թե չի սխալվում նա, ով ոչինչ չի անում:

Ա. ՈՍԿԱՆՑԱՆ

ՀՀ ԳԱԱ ավագ գիտական աշխատակից

ՆԱՄԱԿ Գ.

Պարույր Սևակի գրական ժառանգության, ինչպես նաև ցավալիորեն կարճատև կյանքի հանդեպ ցուցաբերվող առանձնակի հետաքրքրությունը, անշուշտ, բնականոն պիտի նկատել, առավել ևս՝ եթե նոր հրապարակումներով երևան են բերվում նրա անվանն ու վաստակին վայել էջեր և դրվագներ: Վերջին տարիներին կատարված որոշ հրապարակումներ, սակայն, գուցե և հակառակ դրանք ձեռնարկողների ցանկության, չէ թե լրացնում, այլ լրջորեն խաթարում են բանաստեղծի կանոնացած կերպարը, աննպաստ կասկածներ ու մտորումներ հրահրում:

Ընթերցողների նոր սերունդը կարող է մտածել, թե Պարույր Սևակի ողջ կյանքը հալածանքի ու հետապնդումի շարունակական շղթա էր, ազդովին ու պետականորեն կազմակերպված ինչ-որ դավադրությունների ընդգրկման, նահատակության կատարյալ պատրաստություն: Շատ կարելի է, որ Սևակը ավելի խորն է ապրել իր օրերի վայրկյաններում, սրտամոտ ընդունել գրական-ստեղծագործական, մշակութային-քաղաքական հակասությունները, բայց մտածել, թե նա այդ օրերի կրողներից ու կերտողներից չէր, թե նրա գնահատությունների սանդղակով պիտի չափել ազգային կյանքի, գիտության ու մշակույթի արժեքները, ներկա-բացակա անել մտավորակա-

նությունը, նշանակում է շճանաչել մոտավոր անցյալը և այդ անցյալի կենդանի աստիճանները՝ բանաստեղծ Անակին:

Ֆավաի է, որ Պարույր Սևակի անունը հոլովոդ հրապարակումներում կան խաթարված հիշողությունների գրառումներ և մանավանդ՝ անգիտության կամ աշտույնական վարկաբեկիչ դրսևորումներ: Տարիներ առաջ հուշագիրներից մեկը, օրինակ, փորձում էր համոզել, թե գիտական շրջաններում չկամություն է ցուցաբերվել Պ. Սևակի դիսերտացիայի պաշտպանության՝ գիտության դոկտորի աստիճան շնորհելու հանդեպ, թե «Պատմա-բանասիրական հանդես» խմբագրությունը անհարկի կրճատել ու խաթարել է Պ. Սևակի հեղինակակցությամբ լույս տեսած «По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII—IX вв.» գրախոսությունը (ս...մեկ տարվա նյարդային տանջանքներից հետո հոգվածից լույս տեսավ մեկ երրորդ մասը)» («Գաղտնի», 1988, № 8, էջ 47) և որ այդ գրախոսության փաստական հեղինակը հանդուցյալ բանաստեղծն է, մինչդեռ հրապարակումը կրում է հայագետ Աս. Մնացականյանի հեղինակակցությունը և այլն: Այս ամենի կապակցությամբ հերքումով ու հանդամանալի պարզաբանմամբ հանդես եկան ՊԲՀ-ի խմբագրական կոլեգիայի անդամներն ու Մատենադարանի մի խումբ գիտնականներ (տես «Պատմա-բանասիրական հանդես», 1989 թ., № 3, էջ 230—234), ինչպես նաև տողերիս հեղինակը (տես «Գրական թերթ», 1990 թ., 13 հուլիսի, էջ 2) և հուշագրողի համապատասխան գրառումները որակեցին իբրև անիրական, աշտույն:

Թվում է՝ խնդիրն այլևս պարզ էր, իրողությունը՝ վերահաստատված: Սակայն վերջերս «Ազատամարտ» շաբաթաթերթի «Վարուժան» գրական-մշակութային հավելվածում (№ 4, մայիս-հունիս, 1994 թ., էջ 10—11) լույս է տեսել Սեյրան Գրիգորյանի «Պարույր Սևակը անուններ է տալիս... (նամականու մկրատված էջերից)» հրապարակումը, ուր վերոհիշյալ գրախոսության հետ կապված հարցերը դարձյալ իջեցվում են արդեն հերքված հուշագրության մակարդակ, իբրև անվերապահ ապացույց նկատելով բանաստեղծի նամակներից կատարված քաղումները: Անվերապահորեն ընդունելով Պ. Սևակի տարբեր տարիների, այլևայլ մարդկանց ու առիթներով գրած նամակներում եղած բնորոշումներն ու գնահատությունները, հոգվածագիրը եզրակացնում է, թե Սևակի շուրջ տեղականորեն եղել է «դաժան ուղղափառներ» լարում, «ստամենի գրակաճ միջավայր»։ «հաճի, աղփատամուրթյուն, հաշվեառահաշվապայսնություն» և որ «ստամենի էր ոչ միայն գրական միջավայրը, այլև հանրային կյանքն ամբողջությամբ»:

Քիչ է ասել, թե նման եզրակացությունը անլուրջ է ու զրպարտչական, այլև եթե իսկ ինչ-որ շափով Սևակի գրառումներով է թելադրված՝ կարոտ է հանդամանալի քննության, մանավանդ ստուգության առումով: Այսպես, օրինակ, հոգվածից պարզվում է, որ բանաստեղծը «վախել է» «հայ պատմաբանների դավերը», և դրա ապացույցը 1967 թ. հունվարի 16-ին Բաքվում ապրող մի երիտասարդ բանաստեղծի (Վահե Հովակիմյան) հասցեագրած Պ. Սևակի. նամակի այս տողերն են. «Զիա Բունիաթովին էլ հո գիտես: Մի տարի է մեքոնք ֆունկամաշ են լինում ուրե՛կ կերպ պատասխանելու համար: Վերջը եկավ գործը կապի ինձ: Քանդեցին արածս, բայց մեացածն էլ մի բան է: Եթե վաղը-մյուս օրը Համբարձումյանից էլ անցնի՝ կը կարդաս «Պատմա-բանասիրական հանդեսի» առաջիկա համարում՝ կից ստորագրությամբ (որ պետք էր): Այս մասին դեռ ոչ ոքի բան մի ասա...»:

Ս. Գրիգորյանը, ինչպես երևում է, ծանոթ է հուշագրությունների կապակցությամբ մամուլում լույս տեսած հերքումներին, բայց բանաստեղծի վերոբերյալ այս տողերը վճռում են ելքը: Նա վստահորեն եզրակացնում է. «Մի շարք անձինք, հատկապես պատմաբաններ, իրենց ու ավագներին պաշտպանելու մղումով հորինված էին համարում հոգվածը խոչընդոտող արգելքների մատնանշումը, ումանք էլ (Պ. Մուրադյան)՝ նույնիսկ կասկածի տակ առնում այդ աշխատանքի՝ Պ. Սևակի գրչին պատկանելու: Ծվ ահա Սևակի

նամակը ուղղակիորեն ապացուցում է հուշագիրների իրավացիությունը: Այս-
անդ կա ակնարկ այն մասին, որ Բուենիաթովին պատասխան տվողները պի-
տի ինքնին հալ պատմաբանները: Առկա է հեղինակի անհերքելի վկայություն-
ներ հոդվածը բզկտելու, ինչպես նաև տպագրությունը վերին աստիճանի դժ-
վարացնելու կամ նույնիսկ կասկածի տակ դնելու մասին... Վերջապես՝ միա-
նշանակ ասվում է, որ հոդվածը գրել է միայն ինքը Պ. Սևակը, իսկ Ասա-
տուր Մնացականյանի «կից ստորագրությունը» «պետք էր» ինչ-որ նկատա-
ռումով (հավանաբար՝ աղվանագետ պատմաբանի մասնակցությունն ավելի
հիմնավոր տեսք կհաղորդեր հոդվածին)» («Վարուժան», էջ 11):

Ս. Գրիգորյանի համար ամի շարք անձանց, հատկապես պատմաբան-
ների» առարկությունը արժեք չունի, որովհետև նրանք «իրենց ու ավագնե-
րին պաշտպանելու մղումով» են հերքում: Բայց Պ. Սևակի հիշյալ տողերն
իմանալուց հետո հրապարակման հեղինակը պարտավոր էր ի մոտո ծանո-
թանալ բուն խնդրին՝ գրախոսվող գրքին ու գրախոսության արժարժած հար-
ցերին, ՊԲՀ-ի խմբագրությունում ու Հայաստանի կենտրոնական պատմա-
կան արխիվում պահպանվող նյութին և նոր միայն եզրակացնել, թե ինչ մղու-
մով են առաջնորդվում պատմաբանները և ինչու է Պ. Մուրադյանը «կաս-
կածի տակ առնում այդ աշխատանքի» Պ. Սևակի գրչին պատկանելը: Նման
աղբյուրագիտական ուսումնասիրությունից հետո Պ. Սևակի նամակի վկա-
յությունները միանգամայն այլ մեկնաբանություն և որակ կստանային:

Այսօր դժվար է ասել, թե հանգուցյալ բանաստեղծը նսմակը գրելիս
(16 հունվ. 1967 թ.) անմիջական ի՞նչ տպավորության տակ է եղել, կարևո-
րը, սակայն, այն է, որ նա անձնական նամակ է գրում և ոչ հրապարակման
պատրաստվող նյութ, ուստի միանգամայն ազատ է իր որակումների ու գնա-
հատումների մեջ, գուցե նաև ելնում է բաբվեցի երիտասարդ բանաստեղծի
հետաքրքրությունը գոհացնելու ցանկությունից: Այլ պարագաներում՝ իր տե-
ղըն ու դերը քաջ գիտակցող, իմանալիքն ու չիմանալիքը խիստ տարբերակող
Պարույր Սևակը նման տողեր չէր ստորագրի:

Տողերիս հեղինակը լինվին գիտակցում է, որ մեծ բանաստեղծի նամա-
կից քաղված տեղեկությունների գիտական ստուգումը առանձնապես շնոր-
հակալ գործ չէ, բայց քանի որ նրանք արդեն շրջանառում են, և խոսքը գի-
տություն է վերաբերում, անհրաժեշտ ենք համարում վերականգնել անցու-
ռարձի իրանան, փաստացի պատկերը: Կրկնում ենք՝ մեր ճանաչած Պարույր
Սևակը իր իսկ նամականու շրջահայացորեն «մկրատված էջերը» չէր վերա-
կանգնի՝ հակակշիռ կանգնելով բազում հայագետների, առավել ևս՝ անտես
առնելով այլոց վաստակը:

Եվ հիրավի, միանգամայն այլ բացառություններ պետք է տրվեն բա-
նաստեղծի նամակային տողերին:

1. «Մի տարի է մերոնք քրոնֆամալ են լինում ուրեք կերպ պատասխանե-
լու համար»: Վերհիշենք, որ այս տողերը գրված են 1967 թ. հունվարի 16-ին:
Պ. Սևակը չէր կարող չիմանալ, թե 1966 թ. կեսերին, այսինքն՝ նամակը դրե-
լուց ամիսներ առաջ պրոֆ. Աս. Մնացականյանը, իր մտերիմ բարեկամն ու
անվանի հալիաբանը, այդ նույն Զ. Բուենիաթովին և մյուս աղվանագետնե-
րին» պատասխանել է «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը»
մենագրությամբ (Երևան, 1966, 284 էջ): Ուրեմն՝ ոչ ամեկ տարին» պիտի
տառացի ընդունել, ոչ էլ ամերոնց քրտնքամալ լինելը: Երկուսն էլ պատկե-
րավոր արտահայտվելու դրսևորումներ են: Բաբվեցի ակադեմիկոսի գիտո-
գրախոսելու անհրաժեշտության հարցը ՊԲՀ-ի խմբագրությանն է առաջարկ-
վել 1966 թ. նոյեմբերի 4-ին, Աս. Մնացականյանի Նամակ աՊատմա-բանա-
սիրական հանդեսի» խմբագրությանը և այս նամակին կից ներկայացվող
գրախոսականը քննողներին» յոթ էջանոց հիմնավորումով և «Հանուն առողջ
և ճշմարիտ պատմագիտության» հիսուն էջանոց գրախոսությամբ: Խմբագրու-
թյանը ներկայացված առաջին իսկ օրինակի վրա գրախոսության խորագիրը՝
«Ուշացած գրախոսություն ուռճացած զրախոսության մասին» վերանայվել է:

Վերջին 50-րդ էջում առկա է Աս. Մնացականյանի ստորագրությունը և նամակի նույն ամսաթիվը՝ «4.11.1966. Երևան» (տես ՀԿՊԱ, գործ 306, ֆ 188, միավոր 2)։ Ուղեկցող նամակում Աս. Մնացականյանը հանգամանորեն անդրադառնում է հիմնադրի և Բունիաթովի «ստեսության» քաղաքական միտվածությունը և եզրակացնում. «Ահա այս համոզմամբ այս գիտակցությամբ է, որ ես իմ ծառայությունն եմ բերում այդ գործին՝ կայացնելով իմ գիտողությունները 2. Բունիաթովի «Азербайджан в VII—IX вв.» մենագրության մասին և խնդրում եմ այն զետեղել «Պատմա-բանասիրական հանդեսի» առաջիկա հատորում։ Հիշեցնեմ, որ այստեղ շոշափված հիմնական, ընդհանուր պատմագիտական հարցերը քննված են իմ «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» գրքում, խմբագրված ակադ. Ս. Տ. Երեմյանի կողմից և հրատարակված 1966 թվականին Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ»։

Ուրեմն, կրկնում ենք, գրախոսության հայտը ստանալուց մինչև Պ. Սեվտկիի նամակի դրությունը անցել է երկու ամիս ու կես, հետևաբար «մի տարի քրտնքամաշ լինելու» հնարավորություն չի եղել, ընդամենը՝ այդ «քրտնքամաշ» լինողն էլ հավաքական «մերոնք» չեն, այլ պարզապես գրքի, գրախոսության և ուղեկցող նամակի հեղինակ, պատմաբան-բանասեր Աս. Մնացականյանը։ 1966 թ. նոյեմբերին «Պատմա-բանասիրական հանդեսի» այդ տարվա վերջին համարը արդեն տպագրության էր հանձնված, ուստի գրախոսության ամենավաղ հրատարակումը կարող էր կատարվել հաջորդ թվով (1967, № 1), որ և կատարված է։ Ուստի հուշագրողների պնդումը հոգվածը ձգձգելու մասին փաստորեն միայն ռամբասանք է։

2. «Վերջը եկավ գործը կպավ ինձ»։ Խմբագրությունում ընդունված կարգի թե սովորույթի համաձայն տպագրելիք հոդվածները տրվում են մասնագիտական կարծիքի։ Աս. Մնացականյանի 50 էջանոց գրախոսականը նույնպես պետք է այդ ճանապարհն անրնեք, մանավանդ որ՝ արծարծված հարցերը գրախոսվող գրքի հեղինակի մեղքով հիմնովին քաղաքականացվել էին։ Թե դա ինչ է նշանակում այն տարիների «եղբայրության» պարագաներում՝ գիտեն բոլորը, և բոլորից շատ դիտեղ ինքը Պ. Սևակը։ Գրախոսության տպագրությունը հարուգում էր երկու հարց ևս. Աս. Մնացականյանի ներկայացրած հայերեն տեքստը պետք էր ռուսերենի թարգմանել, նկատելի չափով կրճատել և շարադրանքային որոշակի փոփոխությունների ենթարկել։ Երկու մամուլանոց գրախոսություն ՊՐՀ-ը երբեք չի տպագրել։ Խմբագրությունում առաջարկվում է այդ աշխատանքը կատարելու համար հեղինակակցության հրավիրել ակադ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանին։ Վերջինս ուշադրության է առնում հարցը, բայց ոչ թե մշակում-վերանայում է Աս. Մնացականյանի ներկայացրած տեքստը, այլ գրում լիովին ինքնուրույն, նաև լրացուցիչ այլ հարցեր քննարկող մի հոդված, որ անկարելի էր հարասել արդեն եղածի հետ։ Զմոռանանք հիշեցնել, որ Կ. Մելիք-Օհանջանյանին զբաղեցնում էր ոչ միայն 2. Բունիաթովի «Историко-литературная концепция»-ն, այլ նաև ակադ. Հ. Օրբելու «Исбранные труды» գրքի Ա հատորի առանձին դրույթների ու թարգմանությունների քննությունը։ Ի դեպ, Հ. Օրբելուն վերաբերող քննադատության հրապարակումը ՊՐՀ-ի էջերում գրեթե անկարելի էր, որովհետև նախորդ տարիներին նույն հանդեսում Հ. Օրբելու անտիպ աշխատությունները հրատարակության պատրաստելու վերաբերյալ որոշ գիտողություններ էր տպագրել ՊՐՀ-ի դիմավոր խմբագրի տեղակալ ակադ. Արամ Ղանալանյանը, ոտոնը մասամբ վշտադրել էին պրոֆ. Կամիլա Տրևերին (այդ տողերը Կ. Վ. Տրևերը երկու անգամ կարդալ ու թարգմանել էր տվել տողերիս հեղինակին)։ Այս պատճառներով, ահա, նույն Ա. Ղանալանյանի առաջարկությամբ խումբագրությունը Աս. Մնացականյանի գրախոսության հեղինակակցության է հրավիրել Պարույր Սևակին։ Անելիքը նույնն է՝ վեոանայել շարադրանքը, այն դարձնել առավել դիպուկ ու նպատակային, 2. Բունիաթովի կեղծները բանավեճի խնդիր չդարձնել, այլ ձաղկել, բացահայտել «ստեսության» վտան-

գավորությունը հարևան ժողովուրդների պատմության համար, հնչեղություն տալ, բայց և մնալ փաստական նյութի ներկայացված շրջանակներում: Պ. Սեվակը, ալապիսով, աղբյուրներ պրպտելու, նոր գրականություն կարդալու և ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն չունեն, քանի որ այդ ամենը Աս. Մնացականյանը կատարել էր գիտնականի իմացությամբ ու բարեխղճությամբ: Կարելի է պատկերացնել, թե բանաստեղծը ինչ կարողությամբ, վրդովմունքով ու արտահայտչականությամբ է գլուխ բերել գործը: Գրախոսության այժմ արդեն երկհեղինակ տարբերակի (Աս. Մնացականյան, Պ. Սևակ) ռուսերեն թարգմանությունն ստանձնում է բանաստեղծի կինը: Բարեբախտաբար, պահպանվել է նոր տարբերակի տեքստը: Նրա հայերենը կրում է «Э. Ротенберг»-ի «Азербайджан в VII—IX вв.» գրքի մասին» խորագիրը, բաղկացած 64 էջից (ՀԿՊԱ, գործ 307, ֆ. 188, միավոր 2): Այն, անտարակույս, ավելի ընդգրկուն է, պատկերավոր ու կատարյալ, բայց և կարոտ խմբագրական լուրջ աշխատանքի: Մասնակի փոփոխություններով գրախոսությունը թարգմանվում է ռուսերենի և դառնում 55 էջ, 1967 թ. հունվարի առաջին տասնօրյակում կարծիքի հանձնվում խմբագրական կոլեգիայի անդամներ ակադեմիկոսներ Լ. Խաչիկյանին, Աշ. Հովհաննիսյանին, Ս. Սրեմյանին, Բ. Առաքելյանին և պրոֆ. Կ. Ղաֆադարյանին (ՀԿՊԱ, գործ 308, ֆ. 188, միավոր 2): Պահպանվել են և այդ կարծիքները: Նրանց հեղինակները տպագրության անհրաժեշտությունը համարում են անվերապահ, բայց և կատարում են (մանավանդ Լ. Խաչիկյանը) ոչ քիչ կարևոր դիտողություններ ու շտկումներ: Ավելորդ չէ նկատել, որ գրախոսության 55 էջանոց ռուսերեն տարբերակը, որքան հարստացած ու փոփոխված, իր հիմքում պահում է Աս. Մնացականյանի նախնական բնագիրը, ուստի ակադ. Աշ. Հովհաննիսյանը հունվարի 13-ին գրած կարծիքում շարունակում է գրախոսության հեղինակ ճանաչել նրան. «Ընկ. Աս. Մնացականյանի փայլուն հոգվածի իշխող տոնը գրական սարկազմն է, որ ի վերջո փոխանցվում է արդար ցասման» և ապա՝ «Հանձնարարելով Մնացականյանի հոգվածը տպագրության, խնդրում եմ այնուամենայնիվ աչքի առաջ ունենալ իմ արած մատիտադիր մի քանի կրճատումներն ու ուղղումները»: Նույնն է ասում և ակադ. Բ. Առաքելյանը, առաջարկելով կրճատումներ, լրացումներ, փոփոխություններ, «որոնք նշել եմ մատիտով բնագրի վրա կամ նրա լուսանցքներում: Միաժամանակ այդ ամենին իրազեկ եմ պահել գրախոսականի հեղինակ Ա. Մնացականյանին» (14 հունվարի, 1967): Կ. Ղաֆադարյանը ևս «միանգամայն համաձայն է գրախոսողի հետ և պետք է անպայման տպագրել» (13, 1, 67): Լ. Խաչիկյանը գերադասում է ավելի ստույգ լինել, ուստի գրախոսողներին է հիշատակում (12, 1, 67):

Ալապիսով. «վերջը եկավ գործը կպավ ինձ»-ը ամենևին չի նշանակում, թե «Հագին չկարաց, Հյուդին չկարաց, ես՝ կարացի» ինչպես ընկալել են հուշագիրներն ու Սեյրան Գրիգորյանը: Սևակը գիտեր, որ ինքը մասնագետ չէ, բայց հանգամանքների թելադրանքով ստանձնել է Աս. Մնացականյանի գրախոսության վերանայումն ու հեղինակակցությունը՝ որոշ ժամանակ կտրվելով իր բնատուր անելիքից:

3. «Քանդեցին առածս, բայց մնացածն էլ մի բան է»: Արդեն ասել ենք, որ գրախոսության երկհեղինակ ռուսերենը 55 էջ էր, ուստի խնդիր էր առաջացել կրճատել այն: Այդ գործը հանձնարարվեց խմբագրի տեղակալ Ա. Ղաֆադարյանին, պատասխանատու քարտուղար Ա. Ոսկանյանին, հեղինակներ Աս. Մնացականյանին ու Պ. Սևակին, խմբագրության անդամներ էմ. Պիվազյանին ու Վ. Նալբանդյանին: Արդյունքից անբավական են մնում ոչ միայն հեղինակները (թեև բնագրի առաջին էջում կա պատ. քարտուղարի և Աս. Մնացականյանի ստորագրություններ), այլև կոլեգիայի անդամներ Լ. Խաչիկյանը, Աշ. Հովհաննիսյանը, Կ. Ղաֆադարյանը: Վերջիններս նոր կարծիքներ են գրում: Կարևոր ենք նկատում այստեղ բերել Լ. Խաչիկյանի կարծիքն ամբողջությամբ.

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը:

Պատմագրա Զ. Բունիաթովի գրքի մասին շարադրված գրախոսության խմբագրված ու վերադիտված վարիանտի հետ: Բունիաթովի հակագիտական կոնդեպցիայի հիմքում դրված են Անդրկովկասի պատմական ու էթնիկական աշխարհագրության հարցերը, ըստ այդմ՝ նրա սնանկությունը բացահայտելու համար, անտարակույս, անհրաժեշտ էր պահպանել թեկուզ ամենահիմնական ու զորավոր այն փաստերը, որ վերաբերում են Արցախի և Ուտիքի պատմական անցյալին: Առանց այդ նախապայմանի խիստ խոցելի է դառնալու գրախոսությունն՝ ամբողջությամբ առած:

Կտնելով, որ այս վիճակում գրախոսությունը նպատակահարմար չէ հրապարակել, խնդրում եմ հրավիրել խմբագրական կոլեգիայի նիստ, ավելի հանդամանորեն այդ հարցը քննարկելու համար:

Լ. Խաչիկյան

2, 2, 67

«Հանդեսի» խմբագրության վերը նշված անդամների պահանջը կատարվում է: Փետրվարի վերջերին հարցը նորից է քննվում: ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր Մ. Ներսիսյանի համաձայնությամբ շարվածքի վրա կատարվում են անհրաժեշտ լրացում-վերականգնումներ, և գրախոսությունը լույս է տեսնում ընթերցողին այսօր ծանոթ տեսքով:

Ավելորդ չէ դիմել իրողությունների ժամանակագրությանը: Պ. Սևակի «մկրատված» նամակը գրված է 1967 թ. հունվարի 16-ին: Եվ ահա հենց այդ նույն օրն էլ նրա ու Աս. Մնացականյանի ներկայությամբ կատարվել է հոդվածի «քանդումը»:

Ուրեմն բանաստեղծի գծողությունը վերաբերում է գրախոսության ոչ թե վերջնականորեն ընդունված տեքստին, այլ միայն մի տարբերակին, որը հետագայում վերանայվել է խմբագրության կողմից: ՊԲՀ-ի խմբագրությունը կատարել է անհրաժեշտ վերականգնումներ, և տպագրված գրախոսությունը ճիշտ այն է, ինչ անհրաժեշտ է որ լինելու: Այն ժամանակ չէ, այսօր էլ, անկեղծ ասած, գրախոսության նախնական տարբերակները տողերիս հեղինակը տպագրության չէր հանձնարարի: Մի՞թե, օրինակ, գիտական ապացույց կարող են ծառայել գրախոսվող գրքի հեղինակին глупец, невежда, подлый, дурак, идиот որակումները կամ նրա պապերի դավանությունը անգոսնելը: ՊԲՀ-ը ակադեմիական հրատարակություն է և չի կարող անձ կամ ժողովուրդ վիրավորել: Ցավոք, նման բարոյական նորմերի հետ հաշվի չի նստել «Վարուժան»-ի խմբագրությունը:

Այսպես ուրեմն, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության օրգան «Պատմա-բանասիրական հանդես»-ի թե՛ խմբագիրը, թե՛ խմբագրության անդամները (պատմաբան կամ բանասեր) Պարույր Սևակի դեմ ոչ 1967 թ., և ոչ էլ դրանից առաջ ու հետո դավեր չեն կոել, ընդհակառակը, նրանք են բանաստեղծին առաջարկել հեղինակակից դառնալ պրոֆեսոր, ճանաչված աղվանագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական աշխատակից (այժմ հանգուցյալ) Ասատուր Մնացականյանի կողմից ՊԲՀ-ի խմբագրությանը 1967 թ. նոյեմբերի սկզբին ներկայացրած գրախոսությանը, գրախոսություն, որն ուղղված էր ազգայնամոլ Զիա Բունիաթովի՝ Աղվանքի

պատմությանը նվիրված հակագիտական աշխատության դեմ: Ընդունելով այդ առաջարկը Սևակը զգալի գործ կատարեց գրախոսության վերանայման ու մշակման գործում: Երկու հեղինակների ջանքերով, ինչպես նաև խմբագրության անդամների արժեքավոր դիտողությունների շնորհիվ, գրախոսականի վերջնական տարբերակը դարձել է ավելի կուռ, գիտական և նպատակասլաց: Չմոռանանք նկատել, որ գրախոսության այդ տեքստը տպարան է ուղարկվել երկու հեղինակների համաձայնությունից ու ստորագրություններից հետո միայն: Ծղմարտության հետ ոչ մի աղերս չունի Գրիգորյանի «գյուտը» այն մասին, թե իբր գրախոսության միակ հեղինակը միայն Սևակն է, թե իբր հրապարակված գրախոսությունը «բզկտվել», աղավաղվել է խմբագրության կողմից և այլն և այլն: Եզրակացությունը պարզ է. Ս. Գրիգորյանը չի խորացել գործի մեջ, հանդես է բերել անբարեխղճություն և անպատասխանատվություն, նրա հրապարակած նյութը ըստ էության չարամիտ զրպարտություն է:

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմ. գիտությունների դեկտեր